ԿԱՐԾԻՔ

ԱՍՏՂԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

«Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է կառավարման ավանդական համակարգի սահմանափակումների և հանրակրթության ոլորտում ճկուն կառավարման օպտիմալ մոդելի մշակման հրատապությամբ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ընթացող վերջին տարիների բարեփոխումները հռչակել են անցում դեպի կարողունակահեն, մարդակենտրոն կրթություն:

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը ձևակերպել է հիմնական հասկացությունները, հիմնավորել է հետազոտության արդիականությունը՝ նշելով հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, վարկածը: Հստակ ձևակերպված է հետազոտության գիտական նորույթը, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությունը: Առաջադրված են հետազոտության առաջադիր խնդիրներին համապատասխանող պաշտպանության ներկայացվող դրույթներ:

Ատենախոսության առաջին՝ «Կրթական գործընթացի կառավարման ճկուն մեթոդաբանության տեսական և համեմատական վերլուծություն» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «*Կրթության կառավարման հարացույցների զարգացումը և ճկուն կառավարման գիտատեսական հիմքերը*» ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է կրթական համակարգի կառավարումը որպես հարափոփոխ գործընթաց՝ ավանդական վարչարարությունից դեպի ճկուն և հարմարվողական համակարգերի անցման համատեքստում: Նա հիմնավորում է ճկուն կառավարման մեթոդաբանության կիրառման անհրաժեշտությունը, որտեղ դպրոցը դիտարկվում է

որպես ինքնակատարելագործվող կրթական միջավայր՝ արագ արձագանքելով ժամանակակից անորոշություններին, ինչպես նաև ապահովելով սովորողակենտրոն ուսուցում:

Երկրորդ՝ «*Արտերկրի կրթական համակարգերում ճկուն կառավարման մոդելների համեմատական վերլուծությունը և տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում*» ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է միջազգային փորձի վերլուծությունը, փաստարկվում է, որ օտարերկրյա կառավարման մոդելների մեխանիկական կիրառումը անթույլատրելի է. փոխարենն առաջադրվում է հարմարվող-համակցված մոտեցում, որը ենթադրում է պետական չափորոշիչների և հաստատության ներքին ինքնակազմակերպվող մեխանիզմների ներդաշնակ համադրում՝ տեղական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Երրորդ՝ «*Ղեկավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները և կառավարչական կոմպետենցիաները («փափուկ հմտություններ») արդի մարտահրավերների համատեքստում*» ենթագլխում, հեղինակը ներկայացնում և հիմնավորում է դպրոցի ղեկավարի ճկուն կարողունակությունների կարևորությունը: Վերլուծում է ճանաչողական ճկունության, զգացմունքային բանականության և կենսական եռանդի դերերը: Անդրադառնում է, որ ավանդական վերահսկողությանը պետք է փոխարինեն կառավարչական օժանդակությունն ու ուղղորդող ուսուցումը՝ ձևավորելով անվտանգ հոգեբանական միջավայր և խթանելով մանկավարժական կոլեկտիվի ստեղծագործական ներուժը:

Ատենախոսության երկրորդ՝ «Հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման մանկավարժական մոդելի մշակումը և գործառնական բնութագիրը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «*Կրթական գործընթացի ճկուն կառավարման կառուցվածքային-գործառութային մոդելը*» ենթագլխում, հեղինակն առաջարկում է կառավարման ցանցային համակարգ՝ հիմնված նպատակային, բովանդակային, գործընթացային-տեխնոլոգիական և արդյունքային-գնահատողական ենթահամակարգերի միասնության վրա: Ներկայացնում է նաև դրանց շարունակական և համազդեցիկ գործառնությունն ապահովող մոդելը:

Երկրորդ՝ «*Մասնագիտական զարգացման ենթահամակարգի կառավարումը (առարկայական մեթոդմիավորումների օրինակով)*» ենթագլխում, ատենախոսը հիմնավորում է մանկավարժական համագործակցության վերափոխման անհրաժեշտությունը: Ձևական առարկայական մեթոդական միավորումները փոխարինվում են ինքնակազմակերպվող մասնագիտական ուսումնառության ճկուն համայնքներով: Ապացուցվում է, որ արդյունավետ կառավարման հիմքում երկարաժամկետ պլաններից հրաժարումն ու անցումն է կարճաժամկետ աշխատանքային փուլերին, որոնց հետահայաց վերլուծությունը մանկավարժական սխալը դիտարկում է որպես մասնագիտական աճի կարևոր աղբյուր:

Երրորդ՝ «*Հանրային ներգրավվածության և գործընկերային հարաբերությունների ճկուն կառավարման մեխանիզմները (ծնողական և համայնքային կառույցներ)*» ենթագլխում, հանրակրթական հաստատությունը ներկայացվում է որպես բաց էկոհամակարգ: Առաջադրվում է սոցիալական գործընկերության մոտեցում, որտեղ ծնողն ու համայնքը դառնում են կրթական գործընթացի ակտիվ մասնակիցներ: Հիմնավորվում են ծնողական համալսարանների, համաձայնեցված որոշումների կայացման և թափանցիկության մեխանիզմների կիրառումները, որոնք բարձրացնում են դպրոցի դիմակայունությունը ճգնաժամային իրավիճակներում:

Չորրորդ՝ «*Կրթական գործընթացի ճկուն կառավարման տեխնոլոգիական ապահովումը (թվային գործիքակազմ և ֆասիլիտացիա)*» ենթագլխում, ատենախոսը ներկայացնում է մոդելի տեխնոլոգիական և հումանիտար գործիքակազմը: Ցույց է տալիս, որ տվյալահեն վերլուծություններն ու թվային կառավարման միջոցներն արդյունավետ են միայն մանկավարժական օժանդակության և ուղղորդող ուսուցման համադրմամբ: Նա կարևորում է նաև թվային հիգիենան և տեղեկատվական գերբեռնվածության կանխարգելումը, որն ապահովում է ուսուցչի հոգեբանական անվտանգությունն ու կանխում մասնագիտական այրումը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների անցկացում ու արդյունքների վերլուծություն»,

ատենախոսը քննության է առնում նախագծված մոդելի վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է հարցումների, նպատակային խմբերի քննարկումների և հարցազրույցների հիման վրա՝ հիմնավորելով ցանցային, ապակենտրոնացված կառավարման արդյունավետությունը: Էմպիրիկ բազան ընդգրկել է ՀՀ տարբեր մարզերի և Երևանի հանրակրթական հաստատությունների 450 ռեսպոնդենտներ, որոնց թվում՝ 310 մանկավարժ, 45 վարչական աշխատող և 95 ծնող: Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով՝ ելակետային-ախտորոշիչ և ամփոփիչ-գնահատողական: Ելակետային-ախտորոշիչ փուլում սոցիոլոգիական հարցաշարի միջոցով կատարված ուսումնասիրությունը բացահայտել է ավանդական կառավարման համակարգային խնդիրները: Ամփոփիչ-գնահատողական փուլում իրականացվել է նորարարական մոդելի արդյունավետության գնահատում և համեմատական վերլուծություն: Տեսագործնական իրազեկման փուլից հետո ելակետային-ախտորոշիչ փուլում կիրառված հարցարաններով հարցումներ են անցկացվել առանձնացված նպատակային խմբում (155 մանկավարժ և կառավարիչ), ինչը հնարավորություն է տվել համեմատել արդյունքները:

Հեղինակը փաստում է, որ ճկուն պարբերափուլերի և տեսանելիության գրատախտակների կիրառումը նպաստել է աշխատանքային գործընթացների թափանցիկացմանը և համագործակցության ակտիվացմանը:

Հարկ եմ համարում նշել Աստղիկ Վարդանյանի ատենախոսական աշխատանքի արժեքավոր կողմերը.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթները և եզրակացությունները բխում են հետազոտության առաջադիր խնդիրներից:

2. Իրականացվել է արտերկրի կրթական համակարգերում ճկուն կառավարման մոդելների համեմատական խորը վերլուծություն և դիտարկվել է տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում:

3. Առաջարկվել է հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման կառուցվածքային-գործառութային օպտիմալ մոդել, որը գիտականորեն հիմնավորված, լավ մշակված ցանցային ենթահամակարգերի

ամբողջություն է:

4. Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն կապակցված են և բխում են մեկը մյուսից:

5. Աշխատանքը շարադրված է գրագետ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ եմ համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Առաջարկվող մոդելում ցանկալի կլիներ տեղ հատկացնել կառավարչի անձնային որակներին, քանի որ ներկայացված կառուցվածքագործառութային մոդելի կենսագործումն իրատեսական է միայն կառավարչի համապատասխան անձնային որակների առկայության դեպքում:

2. Էջ 109-ում ներկայացվում է հետազոտության մասնակիցների քանակը՝ 310 մանկավարժ, 45 վարչական աշխատող, 95 ծնող (ընդհանուր՝ 450), իսկ էջ 110-ում նշվում է 310 մանկավարժ և կառավարչական աշխատողներ. կարծում եմ թվային արտահայտման մեջ առկա է որոշակի բացթողում (310+45), հետևաբար սխալ է նաև աղյուսակ 2-ում, 3-ում, 4-ում N=310 թվային արտահայտումը:

3. Էջ 115-ում աղյուսակը համարակալված չէ, ուստի էջ 116-ում աղյուսակի հերթական համարի տրամաբանությունը խախտված է:

4. Լավ կլիներ էջ 122-ում «155 մանկավարժ և կառավարիչ» արտահայտության մեջ հստակ առանձնացված նշվեին թվաքանակները:

5. Ցանկալի կլիներ հիմնավորել, թե ինչու է Պիրսոնի բանաձևը կիրառվել միայն ծնողների տվյալների հիման վրա:

6. Էջ 127-ում հետազոտության հավաստիությունը ստուգելու նպատակով ծնողները տարանջատվել են ելակետային (47 ծնող) և ամփոփիչ (48 ծնող) խմբերի: Այդ դեպքում ինչպես է էջ 115-ում, 116-ում ելակետային-արձանագրող փուլի սոցիոլոգիական վերլուծության ժամանակ նշվում ընդհանուր 95 ծնող:

Վերը նշված դիտարկումները բնավ չեն արժեզրկում ատենախոսի կողմից կատարած աշխատանքը:

Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն, գիտական հետազոտություն է, ամբողջովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՎՊՀ-ի գիտքարտուղար,
մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս. Բեժանյան